

ինչպէս վարը պիտի տեսնենք, վկայական
թղթերով:

Սարգիս հաղիւ ոտքը Զմիւռնիա կոխեց,
տեղւոյն Հայերէն մեծաւ շքով եւ համակրու-
թեամբ ընդունուեցաւ: Սկսաւ անմիջապէս իւր
համբաւեալ քարոզութիւնները քաղքին հայ
եկեղեցւոյն մէջ: Այն ժամանակները եկեղեցւոյ
ամէն քարոզներու մէջ անպատճառ քաղկեդոնի
Ս. Ժողովոյն, Ս. Լեւոն Քահանայապետին, եւ
ուղղափառներուն («ծայթք, ախթարմայք, հեր-
ձուածողք, հետեալք» եւն) դէմ նշովքներ կը
տեղային: Սարգիս ասոնցմէ եւ ոչ մին բերանն
առաւ, եւ մեծաւ խոհեմութեամբ կաթուղիկեայ
հաւատքը քարոզեց: Ժողովուրդն անմիջապէս
երկուքի բաժնուեցաւ, մէկ մասն սկսաւ զինք
բամբասել եւ ատել, իսկ ուրիշներն իրեն վարդա-
պետութեան յարեցան. Սահակ Ահագին Առաջ-
նորդն, իւր բարեկամը, տեսաւ որ Սարգսի մեծ
համբաւն ու հմտութիւնը ազգն իւր կողմը կը
ձգէ. սկսաւ նախանձիլ իրեն եւ ատել իսկ զինքն
ու վարդապետութիւնը: Սարգիս նախատեսելով
յառաջ գալիք շարիքները՝ նոյն տարին աշնան
Պրուսա գնաց, ուր նոյնպէս ազգը մեծ սիրով եւ
պատուով ընդունեցաւ զինքը: Այն ատեն Պրու-
սայի Առաջնորդ էր Գէորգ Արքեպ. Ղաբանցի
(Հարանդեցի, 1752—1756. Վանքեան Արիստ.
Էպ. «Բիւզանդիոն» 1906 թ. 3127) որ յա-
ռաջ Կ. Պոլսոյ Պատրիարք եղած էր (15 Յունիս
1751—1752 Մայիս) եւ քաղցրաբարոյ, հիւրա-
սէր եւ քաղաքավար մէկն էր, եւ զՍարգիս շատ